ՍԴ1/0024/01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի սեպտեմբերի 18-ին քաղաք Երևանում

Ուսումնասիրելով թիվ ՍԴ1/0024/01/20 քրեական գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին դիմելու մասին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2020 թվականի օգոստոսի 4-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 90955619 (ՍԴ1/0024/01/20) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Դավիթ Արարատի Առուստամյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, և 2020 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ ընդունվել է նույն դատարանի դատավոր Հ.Մեխակյանի վարույթ:

1.1. 2020 թվականի օգոստոսի 13-ին թիվ ՍԴ1/0024/01/20 քրեական գործը վերամակագրվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բ.Բախշիյանին:

1.2. 2022 թվականի մարտի 10-ին վերոնշյալ քրեական գործը վերամակագրվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ.Ջիվանյանին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հուլիսի 27-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ, գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար, դիմել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի սեպտեմբերի 11-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 50-րդ հոդվածով, արձանագրել է. *«(…) [Ը]ստ սույն գործի նյութերի՝ ամբաստանյալ Դ.Առուստամյանը, տուժող Հ.Գալստյանը և վկաներից մեկը բնակվում են ՀՀ Կոտայքի մարզում, իսկ վկաների ճնշող մեծամասնությունը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս, ամբաստանյալը միջնորդել է փոխել գործի տարածքային ընդդատությունը, հետևապես ընդդատությունը փոխելով չի տուժի արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքը:*

Դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 12.12.2022 թվականից առ այսօր Ադրբեջանի Հանրապետության կողմից փակ է պահվում Գորիս-Ստեփանակերտ միջպետական

ավտոճանապարհը, որի պատճառով հետաձգվել են ԱՀ Ստեփանակերտ քաղաքում (…) սույն գործով նշանակված դատական նիստերը: Նույն պատճառով պայմանավորված ամբաստանյալը, տուժողը, Հայաստանի Հանրապետությունում բնակվող վկաները չեն կարողացել ներկայանալ ԱՀ Ստեփանակերտ քաղաքում նշանակված դատական նիստերին: Նշված հանգամանքներից ելնելով, ինչպես նաև ճանապարհը բացվելու ժամկետի անորոշ լինելու պայմաններում, կարող է խախտվել դատավարության համապատասխան մասնակիցների արդար դատաքննության իրավունքը:

Այսպիսով, վերը նշված պատճառաբանությամբ Դատարանը գտնում է, որ սույն գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և այն ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»[1]*:*

6. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 4-ի որոշման համաձայն. *«(…) Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Դավիթ Արարատի Առուստամյանին վերագրվող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում և տվյալ գործն իրավացիորեն դատախազության կողմից ուղարկվել և շուրջ 3 տարուց ավելի քննվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:*

Միևնույն ժամանակ, քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը չեն բնակվում Կոտայքի մարզում, այլ նշված մարզում ընդհամենը բնակվում են ամբաստանյալը և տուժողը: Քրեական գործի մեղադրական եզրակացության ուսումնասիրությունից ակնհայտ է նաև, որ դատակոչված 13 վկաներից մի քանիսը բնակվում են ՀՀ տարբեր մարզերում, իսկ թվով 7 վկաներ հանդիսանում է Արցախի Հանրապետության ՊԲ տարբեր զորամասերի զինծառայողներ:

---

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 240-242:

Այսինքն՝ սույն դեպքում բացակայում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական գործի քննության տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքերը:

Ինչ վերաբերում է դատավոր Վ.Ջիվանյանի այն պատճառաբանությանը, որ Գորիս-Ստեփանակերտ միջպետական ավտոճանապարհի փակ լինելու պատճառով ամբաստանյալը և տուժողը չեն կարողանում ներկայանալ դատական նիստերին, ապա նշված հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ քրեական գործի քննության տարածքային ընդդատությունը փոխելու համար: Այդ առնչությամբ հարկ է փաստել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այլ նստավայրերում քրեական գործի քննությունն իրականացնելու հնարավորությունը բացառված չէ, որպիսի պայմաններում առավել արդյունավետորեն հնարավոր կլինի ապահովել գործի ողջամիտ ժամկետում պատշաճ քննությունը: (…)»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ1/0024/01/20 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական գործը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին որոշումը:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի*

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 4-6:

կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[3]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

---

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս»:*

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2023 թվականի մարտի 24-ին ամաբաստանյալ Դ.Առուստամյանը միջնորդություն է ներկայացրել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով թիվ ՍԴ1/0024/01/20 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխել և այն ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[6]:

Վերոնշյալ միջնորդության դեմ մեղադրող Ա.Գրիգորյանը չի առարկել[7]:

- Համաձայն սույն գործի նյութերի՝ դատավարության մասնակիցներից ամբաստանյալ Դ.Առուստամյանը, տուժող Հ.Գալստյանը և վկա Պ.Կարապետյանը բնակվում են Կոտայքի մարզի դատարանի դատական տարածքում, իսկ տասներկու

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:
[6] Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթ 220:
[7] Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթ 241:

վկաների մեծամասնությունը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս[8]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, բավարարելով ամբաստանյալ Դ.Առուստամյանի միջնորդությունը, վարույթի ընդդատությունը փոխել և այն Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է փոխանցել այն պատճառաբանությամբ, որ ամբաստանյալը, տուժողը և վկաներից մեկը բնակվում են ՀՀ Կոտայքի մարզում, իսկ վկաների ճնշող մեծամասնությունը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս:

Բացի այդ, Ադրբեջանի Հանրապետության կողմից փակ է պահվում Գորիս-Ստեփանակերտ միջպետական ավտոճանապարհը, որի պատճառով ամբաստանյալը, տուժողը, Հայաստանի Հանրապետությունում բնակվող վկաները չեն կարողանում ներկայանալ ԱՀ Ստեփանակերտ քաղաքում նշանակված դատական նիստերին[9]:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, չհամաձայնվելով նշված դիրքորոշման հետ, նշել է, որ ընդդատությունը փոխելու հիմքն առկա չէ, քանի որ քրեական վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը չեն բնակվում Կոտայքի մարզում:

Ինչ վերաբերում է դատավոր Վ.Ջիվանյանի այն պատճառաբանությանը, որ Գորիս-Ստեփանակերտ միջպետական ավտոճանապարհի փակ լինելու պատճառով ամբաստանյալը և տուժողը չեն կարողանում ներկայանալ դատական նիստերին, ապա նշված հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ քրեական գործի քննության տարածքային ընդդատությունը փոխելու համար[10]:

13. Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ գտնում եմ, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու

---

[8] Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 36-64:
[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հայեցողական լիազորությամբ, հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը, քրեական գործի տարածքային ընդդատությունը ամբաստանյալի համաձայնությամբ փոխել և գործը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ուղարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ:

14. Միաժամանակ, անդրադառնալով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վկայակոչած՝ Գորիս-Ստեփանակերտ միջպետական ավտոճանապարհի փակ լինելու հանգամանքին՝ ապա թեև այս առումով ընդունելի է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատողությունը, որ նշվածը քրեական գործի քննության տարածքային ընդդատությունը փոխելու հիմք չէ, սակայն այն սույն դեպքում որոշիչ լինել չի կարող:

15. Ամփոփելով՝ գտնում եմ, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ1/0024/01/20 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական գործը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին որոշումը հիմնավոր է:

Վերոգրյալի հիման վրա, համաձայն 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասի՝ ղեկավարվելով նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՍԴ1/0024/01/20 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Դավիթ Արարատի Առուստամյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ